

ների գերագոյն և միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով քողնելով մօտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային հոբիուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր փունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական և վարչական դելը վարելու համար:

Հայոց Ազգ. հոբիուրդ

1918թ. մայիս 30

Թիֆլիս.

Այսպիսով, Հայաստանի անկախութեան յայտարարութեան օրը իսկապէս պէտք է համարւէր մայիս 30ը: Հակառակ դրան, համարւում է մայիս 28ը, այսինքն, այն օրը, երբ Ազգ. խորհուրդը վճռեց հաշտութեան պատուիրակութիւն ուղարկել Բաթում: Անուղղակի կերպով, այս օրն էլ կարող է համարւել անկախութեան սկզբնաւորութիւն, որովհետեւ թիւրքերը հաշտութեան բանակցութիւններ վարելու համար նախապայման էին դրել անկախութեան յայտարարութիւնը: Ընդունելով թիւրքերի պայմանը՝ Ազգ. խորհուրդը դրանով իսկ հաստատած էր լինում անկախութեան փաստը:

Այսպէս թէ այնպէս, Հայաստանի Հանրապետութեան ծագման օրը ընդունւեց մայիս 28ը: Այդ օրը դարձաւ նւիրական հայ ժողովրդի համար և մտաւ ազգային տօնացոյցի մէջ, իբրեւ սրբադան օրերից մէկը:

Մայիս 30-ին, Բաթումում, սկսւեցին բանակցութիւնները օսմանեան և հայկական պատուիրակութիւնների միջև: Մի շարք նիստերից յետոյ, կողմերը եկան համաձայնութեան, և յունիս 4-ին, օսմանեան և հայկական պատուիրակութիւնները, հանդիսաւոր նիստում, ստորագրեցին հաշտութեան դաշնագիրը Թիւրքիայի և Հայաստանի Հանրապետութեան միջև: Առաջին միջազգային վաւերաթուղթն էր այդ, որ ստորագրում էին անկախ Հայաստանի ներկայացուցիչները:

Բաթումում ստորագրւած վաւերագրերն էին. — «Խաղաղութեան և բարեկամութեան դաշինքը Օսմանեան Կայսերական Կառավարութեան և Հայաստանի Հանրապետութեան միջև» և 3 յաւելածներ, որոնցից առաջինը վերաբերւում էր թրանզիտին, երկրորդը՝ առեւտրին սահմանակից շրջաններում և երրորդը՝ կրօնական ազատութեան պայմաններին: Մի համաձայնութեամբ էլ կարգաւորւում էր գերիների փոխանակութեան հարցը: Նոյն օրը Հայաստանի պատուիրակութիւնը մի համաձայնագիր էլ ստորագրեց թիւրքերի և ազրբէջանցիների ու վրացիների հետ երկաթուղային դոյքերի բաշխման մասին՝ ըստ երկաթուղագծի երկարութեան:

Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 յօդւածներից: Երկրորդ յօդւածը գծում էր սահմանը Թիւրքիայի ու Հայաստանի միջև: Պէտք է նկատել, որ մայիս 26-ի վերջնագրի համեմատութեամբ, այստեղ